



### 3. ՎԼԵՍԿԵ ՂՈՉԸ

Ինո՞ւմ ա, չինո՞ւմ մին թաքավեր ա ինո՞ւմ: էտ թաքավերին ինո՞ւմ ա վեց տըղա. մինը մինան զաշանգյ, մինը մինան օժավ: Անց ա կենըմ մին խիլլա վախա, էտ տըղերքը մըժանըմ ըն, ըտրանց փըսակվելի վախտը կյամ ա:

Մին օր մըեժ տըղան հորըն ասըմ ա. — Ա' հա՛ր, թող յրես քյինիմ յարմուկա, տըեսնամ՝ հինչ կա, հինչ չի կա:

Հա՛րը ոսգի յա կըենըմ, էտ տըղան քյընրմ ա յարմուկա, հտ տըեսնալիս մըթին ա ընգնըմ, Ճընապարին մին տոն ա ինըմ: Տա էտ տոնը զոնաղ ա ընգնըմ: Քըշերը քոն ա ինըմ, ուտութանա եր ա կըենըմ, տոնս կյամ հայաթը, թա իրեսը լըվանա, բուրգան մին իշեղ ա ընգնըմ աշկավը, էլհա կորչըմ:

Տա գյուղում չի, թա էտ հի՞նչ ա, ասըմ ա. — Հա՛րաթ արևըն ա, տոնս ա կյամ:

Տա իրեսը լըվընալանը ետը տոն ա նի մըննըմ: Տանտըրոնչան հըրցընըմ:

Տընատարը ասըմ ա. — էտ թաքավերին ախճիգյն ա: Նա մի-նա՛կ ամման ուտութանա յա տոնս կյամ, էլհա իթտրբաթաի բնում: Հիշքա՛ն տըղերքյ ըն եկալ թա օղի՛ն, ամմա կըրացալ չըն: Հա՛րը էտ փըսացուռներին ժամանակ ա տըվալ, ասալ. «Թա կարիքյ իմ ախճիգյրս ճարիք, ծըեզ կըտամ, ծըեզ հալալ, թա չէ ծըեզ կըտորել ըմ տալուա:

Թաքավերին տրդան վրեր էտ լսում ա, դաստի քլընում ա էտ ըխճըկանը հորը կոշտը:

էտ թաքավերը ըտրան վեց օր վախտ ա տամ: Վեցինչի օրը էտ տրդան ճարում չի ըխճըկանը: էտ տրդին հունցու պայման ին կապալ, ինդի էլ անում ըն, տանում ըն ըսպանում:

էտ տրդին թաքավեր հարը, ախպերքը շատ ըն մըտածում, թա խե" չի կյամ, խե" յա ետանում: Թաքավերը գլուղում ա, վրեր մին օրիշ թաքավերոթունի մեչի մարթ ըն սպանում: Թաքավերը տըրըկյուսում ա:

Անց ա կըննում մին խիլլա վախտ: Թաքավերին էրկունչի տրդան էլհա դաշանք ա անում հորը, վրեր ուրան թողի, քլինի յարմուկա: Թաքավեր նան թաքուհին թողըմ չըն, ամմա էտ տրդան զոռըմ ա, քլընում: էտ տրդան էլհա զոնաղ ա ընգնում էտ տոնը, էլհա համին էն ըխճըկանը դարդան ըտրան սպանում ըն:

Իտի թաքավերին հինգ տըղերքը քլընում ըն էտ ըխճըկանը դարդան կըլխընին բաղա տամ:

Մընում ա լոխճան պուճուր տրդան:

Մին օր էտ պուճուր տրդան կյամ ա հորը կոշտը, դաշանք անում, վրեր թողի, քլինի յարմուկա: Թաքավերը թողըմ չի, էտ տրդան շատ ա դաշանք անում, ասըմ. — Ա' հար, լավ ա, թող քլինիմ տըրեսնամ ախպերքըս ըշտընդ ըն, քլինիմ ընդրանց յա ազադիմ պըերիմ, յա ընդրանց նըհետ մինտընդ մըեռնիմ:

Հարը շատ կըղնըվում ա, ասըմ. — Քլընում ըս, քլինի, ջըհանդար-դյոռը թա քլընում ըս, սըեվ ատակը թա քլընում ըս, իստիրուշաղը թա քլընում ըս: Յըես էլ կասիմ, թա իսկի տըղա չօնիմ...

էտ տրդան հիշքան կարըմ ա, վըեսկե յա յոր օնըմ, էն մին օրը հըղե ինըմ յարմուկա:

Քլընում ա յարմուկա ետ տըեռնալիս մըթեն ա ընգնում, քլընում ա համին էտ տոնը զոնաղ ընգնում, քըշերը ըտընդ կըննում, էքսը եը կենում, ուռութանա տուն կյամ տոռնը, թա իրեսը լըվանա, մին շափաղ ա աշկավը ընգնում, մին էլ կորչում: էտ տրդան գլուղում ա թա արեըն ա շոխկը քըցալ, մին էլ թըխպավ ծասկվալ: Կյամ ա տոն տընըտընուլըն անա հըրցընում: Տընատարը նաղլ ա անում էտ լոխ, հինչու մըեծ ախպորը նաղլ ա ըրալ: Ըտընդ էտ թաքավերին պուճուր տրդան դաստի կըլոխ ա ընգնում, վրեր ուրան ախպերքը ուրանց կըլոխը ըտընդ ըն բադի տըվալ:

էտ տրդան տուն ա կյամ, քլընում թաքավերին կոշտը պայման կապում, վրեր շորս օրըմը կըճարի ընդրա ըխճըկանը, վրեր ճարի,



ներհատը փրսակվելու յա: Ըտրանա ետը կյամ ա համին էտ տոնը, վրեսկեն յոր օնըմ, քյընըմ մին զարգյարի կոշտ, ընդրան ասըմ, վրեր մին վրեսկե ղոշ շինի, վրեր ինքը մեչին տըղվարվի, մեչի ղոլան էլ տոնը քըլլի:

Հոնցը ասըմ ա, իտի էլ զարգյարը ղոշը շինըմ ա: էտ տըղան մին խիլլա վրեսկի յա տամ, ղոշը յոր օնըմ, քյընըմ: Նտալ մին էրկու մարթի փող ա տամ, վրեր էտ էրկու մարթը էտ ղոշը էտ քաղաքին քուչոցավը ման ածին: Ինքն էլ վախտին նի յա մընըմ մեչը: էտ էրկու մարթը էտ ղոշը սաղ քոչոցավը ման ըն ածըմ, պրերըմ թաքավերին պալատին կոխկավը թա տանի՞ն, թաքավերին ծառեքը տոնս ըն կյամ, թմաշա անըմ: Ըտրանցան մինը քյընըմ ա թաքավերին ասըմ, թա իստի-խտի պրեն կա: Թաքավերը տոնս ա կյամ էտ ղոշը պրերիլ տամ ուրան հայաթը թըմաշի հըհտի:

Թաքավերին ախճիգյը, միշտ տափին տակին մին պալատ կար, ընդընդ էր ապըմ, վրեր վրեշ մինը ուրան տըեսնա վեչ: Նա մինակ ուրան պալատին ըխճըկորցը, ուրան ղուլլուղոցը իրեսն ար տըեսնըմ: Ըտրանց նըհտ խոսըմ, ասըմ, ինքը տոն շար կյամ, քանի վրեր արեկին նըման շըղշոցըմ ար:

Վրեր ղոշը պրերըմ ըն, էտ ըխճըկորցան մինը կյամ ա, ասըմ.  
— Քու հար մին վրեսկե ղոշ ա թողալ պրերին պալատին հայաթը, վրեր տըեսնաս քյեփըտ կկյա, էնքան ղաշանգյ ա, թող քընեղ էլ թողի, տըեսնաս:

Ախճիգյը հորը խընթըմ ա, վրեր վրեսկե ղոշը պրերին տըեսնա:

Հարը էտ էրկու մարթին խիլլա փող ա տամ, ասըմ. — Հի՞նչ կինի՞, վրեր էտ ղոշը էրկու օրավ թողեք իմ պալատըմըս: էտ էրկու մարթը փողը յոր ըն օնըմ, վրեսկե ղոշը թողըմ պալատըմը, քյընըմ:

էտ ղոշը տանըմ ըն թաքավերին ըխճըկանը տափին տակին պալատը: Թաքավերին ախճիգյը միշն քըշերվան կըեսը քոն չի ինըմ, էտ ղոշին ա եշըմ: էնքան ղաշանգյ ար շինած, վրեր քըշերը լուս ար տամ: էտ ախճիգյը էնքան հայիլ-մայիլ ա ինըմ, վրեր հաց չի օտըմ, կերակուրը մընըմ ա: Շատ եշիլանը հտը քոնը տանըմ ա:

Թաքավերին տըղան վրեսկե ղոշին տոնը պընց ա անըմ, տոնս կյամ, թաքավերին ըխճըկանը պածին հացը, կերակուրը օտըմ, էլհա նի մընըմ ուրան տըեղը: Ուոռթանա էտ ախճիգյը տըեսնըմ ա, վրեր կերակուրը կա վեչ, մընըմ ա մաթ մընցած, թա հո՛ւ կինի կերած:

Մըթկըմը տընըմ ա էն մին քըշերը բուսը պահի, տըեսնա էտ հո՛ւ վա, կյողին փըռնի:

Իտի էլ անում աւ Քըշերվա կրեսին էտ տըղան տուն ա կյամ, թա կերակուրը օտի, էտ ախճիգլը ըտրան տըեսնում աւ էտ տըղան էներան կիեղեցիկ ա ընձւմ, վըեր տըեսնալըն ըրմստ սիրահարվում աւ

էտ ախճիգլըն ասում աւ. — Տու իմ սըերտըս հըմայալ ըս, ամմա իմ հար ինձ քլըեղ չի տալ, միչն մին հարց էլ կա, պաղասխանը տասս վեչ, իմ հար վեց ըխճըկա մին տեսակ շոբերըմ, մին տըռնա տուն ա օնեխու, ասի. «Վըե՞րն ա իմ ախճիգլըս», տու ըիդի գլիդաս, թա վըեր գլիդացիը վեչ, էլհա քլըեղ ըսպանեխու լաւ Յըես քլըեղ դոնյուղ կանիմ, իմ աչ վըեսնըս կըծըռիմ, տու ըտրանալ ինձ կը ճընանչիս, վըեր լըես ըմ

Վըեր էրկու օրը անց ա կենում, կյամ ըն վըեսկի դոչը տանում Թաքավերին տըղան սլայմանին օրը կյամ աւ Տա քլընում ա թաքավերին կոշտը

Թաքավերը հըրցընում աւ. — Հը՞, ճարեցի՞ր, թա ըշտըեղ ա իմ ախճիգլըս

Տըղան ասում աւ. — Ըարեցի

Թաքավերը մընում ա ըրմացած, թա էտ տըղան հո՞ւնց ա տըեղը գլիդացալ

Ասում աւ. — Կկարի՞ս նշանց տասս

Թաքավերին տըղան ասում աւ. — Կկարիմւ — Համ ասում ա, համ տանում նշանց տամ

Թաքավերն ասում աւ. — Լավ, էտ գլիդացիը, մըհեկ քլըեղ մին հարց կըտամ, թա գլիդացի՞ր, համ ախճիգլըս, համ էլ թաքավերոթունիս կեսը քլըեղ կըտամ, թա գլիդացիը վեչ, էլհա քլըեղ ըսպանել ըմ տալու

Թաքավերին տըղան ռադի լա կըենում

էն մին օրը թաքավերը ուրան ախճիգլը օրիշ վեց ըխճըկա նըհետ լոխ մին տեսակ շոբեր կիեցած, տուն ա պըերըմ պալատին հայաթը, ասում. — Կկարի՞ս գլիդաս, թա վըե՞րն ա իմ ախճիգլըս

Ախճիգլը աչ վըեսնը ծըռում աւ Թաքավերին տըղան դաստի գլուղում ա, տանում ա դուղ ծըեռքն օսին տինում

Ըտրանա հտը էտ թաքավերը տըրմծ պալմանը կադարում աւ Օխտը օր, օխտը քըշեր հըրսանեքլ անում, մըեծ հարստոթունով, մըեծ պեծինքլավ ըխճըկանը ճընապար տինում դիրի էտ տըղին հայրենիքը: էտ տըղան վըեր ուրանց պալատըն ա կյամ, ըտրա հարը նան մարը ուրխանում ըն, թաղանդան օխտը քըշեր, օխտը օր

հըրսանիք ըն անըմ, սաղ ժողովուրթին կանչըմ, հարսին կըլխին  
վըեսկե շաղ տամ:

Ըտրանա ետը հմրր էտ տըղին կարքըմ ա թաքավեր, էտ ըխճը-  
կանն էլ՝ թաքուհի:

էն պարզ, դաշմանգլ երգչինքան իրեք խընձոր ա եր ընգնըմ-  
մինը՝ ասողին, մինը՝ էս հաքյաթը կարթողին, մինն էլ՝ տիպողին:

